

գերկարութիւն ճանապարհին՝ եկն աղերսել առ թագաւորն, զի արձակեացէ զքեռորդին՝ ՚ի բանտէն, միանգամայն եւ բարձցէ զգայթակողութիւն յիսութեանն: Զիջաւ վաղվաղակի Լեւոն յաղաչանս հայրապետին, եւ կամեցաւ ինքնին երթալ եւ հանել պատուով: Այլ մինչ չեւ եկեալ նորա եւ քեռոյն՝ վսեմական իմն խորհեցեալ Հեթմոյ՝ փափագեաց գերագունի ազատութեան. եղ ՚ի մտի հրաժարել ՚ի սպառ յաշխարհական շքոյ հեթեթանաց, որ գրեաթէ ՚ի խանձարրոց յաղաչեցին նմա. զի ՚ի գրկաց մօրն՝ անկաւ ՚ի յաղթկու գիրկս Թորոսի Բ, եւ մինչ չեւ զաջ եւ զահեակ ծանուցեալ՝ պսակեցաւ ընդ դստեր նորին. ապա բազում անգամ նեղեցաւ պաշարմամբ Լամբրունի՝ ՚ի Սլեհէ, ՚ի Ռուբինէ եւ ՚ի Լեւոնէ, եւ զի արդէն ՚ի ձեռս սորա անկեալ էր բոյն տոհմին իւրոյ եւ հայրենի գերեզմանքն (Սկեւռայ), կամովին այնուհետեւ եթող էլիք զկալուածսն ՚ի ժառանգս իւր. յիշեաց զմայր իւր Շահանդուխտ եւ զքորսն անձկալիս՝ զՏալիթա եւ զՇուշան, զկանխեալսն ՚ի փոխել զփափկութիւն իւրեանց՝ ընդ աշխարհուրաց խստակրօն տաքազու. յիշեաց մանաւանդ զհայրացեալն բնաւից զհարազատ իւր Ս. Ներսէս, որում այնքան ցանկալի էին միայնութիւնք եւ անապատք աղօթանուէրք. եւ հրամայեաց բերել սքեմ կրօնաւորութեան, զգեցաւ եւ ծածկեաց զմնացուած իշխանական նշանացն, յառեալ այնուհետեւ զաչսն յընթերցուածս գրոց, եւ զմիտսն յԱստուած. եւ կեայր յանդորրու՝ որպէս թէ ոչ երբէք բազմեալ ՚ի սեբաստական բարձի խրոխտապանձն այն դղեկին Լամբրունի: Մեծ եղեն հիացումն եւ ստրջանք թագաւորին՝ ՚ի տեսանելն զհամարեալն իւր հակառակորդ՝ յայնպիսում հեզութեան սարասի. եւ ամենայն փայլք փառաց իւրոց՝ ստուերացան յայնմ պահու՝ ՚ի պարզութեան առաքինակրօն համբերողին. այն օր կարծեմ յաղթեցաւ Լեւոն քան յայլում երբէք աւուր. անկաւ անկեղծ խանդադատանօք զպարանոցաւ խոնարհելոյն վասն իւր եւ վասն հեղինակին խոնարհութեան՝ Տեառն Յիսուսի. համբուրեցին զիրեար, խնդրեցին ներումն թողութեան յիրեաց, եւ ձեռն ՚ի ձեռն տուեալ թագաւորին եւ գերագանցեալ կրօնաւորին, էլին ՚ի վաղեմի ոստանէ անտի Ռուբինեանց: Եւ զի հաստատութեամբ ՚ի մտի եղեալ էր Հեթմոյ՝ ոչ եւս մտանել յապարանս աշխարհականս, այլ ՚ի մենաստանի ուրեք հանդարտել զմնացուած կենաց իւրոց, ընծայեաց նմա Լեւոն զնախապատիւն եւ զգերահռչակեալն մենաստանաց աշխարհին՝ զԴրազարկն, ՚ի դադար եւ յաթոռ, տէր եւ առաջնորդ նմին զնա կարգեալ. ուր եւ եկաց ցօր